Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-107[10]-03.10.2012-ՍՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՀՈԴՎԱԾ 1. «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-409-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի տասնմեկերորդ պարբերությունը «հատուկ առաջադրանքների» բառերից հետո լրացնել «կամ որակյալ աշխատանքի» բառերով:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 6-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի 3-րդ կետում «ինչպես նաև հատուկ առաջադրանքների որակյալ կատարման համար պարգևատրումները» բառերը փոխարինել «ինչպես նաև հատուկ առաջադրանքների կամ աշխատանքի որակյալ կատարման համար պարգևատրումները» բառերով.

2) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ կետով՝

«5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների հետ առնչվող քաղաքացիական ծառայողներին տրվող հավելումը»:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ.

Աշխատա-վարձի մակար-դակները	Աշխատա-վարձի բնա-կանոն աճը	Կրտսեր պաշտոններ			Առաջատար պաշտոններ			Գլխավոր պաշտոններ			Բարձրագույն պաշտոններ	
		3-րդ ենթա-խմբի սանդ-ղակ	2-րդ ենթա-խմբի սանդ-ղակ	1-ին ենթա-խմբի սանդ-ղակ	3-րդ ենթա-խմբի սանդ-ղակ	2-րդ ենթա-խմբի սանդ-ղակ	1-ին ենթա-խմբի սանդ-ղակ	3-րդ ենթա-խմբի սանդ-ղակ	2-րդ ենթա-խմբի սանդ-ղակ	1-ին ենթա-խմբի սանդ-ղակ	2-րդ ենթա-խմբի սանդ-ղակ	1-ին ենթա-խմբի սանդ-ղակ
11	Աճ չկա	1.65	1.91	2.2	2.52	2.91	3.36	3.84	4.39	5.02	5.75	6.6
10	Երեք տարին մեկ	1.61	1.85	2.13	2.45	2.83	3.27	3.75	4.27	4.89	5.59	6.42
9		1.57	1.8	2.07	2.38	2.75	3.17	3.64	4.16	4.76	5.45	6.25
8		1.53	1.76	2.01	2.32	2.67	3.09	3.56	4.05	4.63	5.3	6.08
7	Երկու տարին մեկ	1.48	1.7	1.96	2.26	2.6	2.99	3.47	3.95	4.51	5.16	5.91
6		1.45	1.65	1.91	2.2	2.52	2.91	3.36	3.84	4.39	5.02	5.75
5		1.41	1.61	1.85	2.13	2.45	2.83	3.27	3.75	4.27	4.89	5.59
4	Յուրա-քանչյուր տարի	1.37	1.57	1.8	2.07	2.38	2.75	3.17	3.64	4.16	4.76	5.45
3		1.33	1.53	1.76	2.01	2.32	2.67	3.09	3.56	4.05	4.63	5.3
2		1.3	1.48	1.7	1.96	2.26	2.6	2.99	3.47	3.95	4.51	5.16
1		1.26	1.45	1.65	1.91	2.2	2.52	2.91	3.36	3.84	4.39	5.02

ՀՈԴՎԱԾ 4. Օրենքի 10-րդ

1) հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.2-րդ մասով.

«Քաղաքացիական ծառայության ստաժի վեց ամսից ավելի ընդմիջման դեպքում քաղաքացիական ծառայողի պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերով և 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով, եթե քաղաքացիական ծառայության ստաժի ընդմիջման ընթացքում քաղաքացիական ծառայողն անընդմեջ զբաղեցրել է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հանրային ծառայության պաշտոն: Հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածը քաղաքացիական ծառայողի աշխատավարձի բնականոն աճի հաշվարկման հիմք չէ:».

2) հոդվածի 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Քաղաքացիական ծառայողի աշխատավարձի հերթական միավոր ավելացումը, բացառությամբ սույն օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, իրականացվում է աշխատանքային տարին լրանալուն հաջորդող ամսվա 1-ից՝ սույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան:»

ՀՈԴՎԱԾ 5. Օրենքի 13-րդ հոդվածի՝

1) 3.1-ին մասի առաջին նախադասությունը «բնույթ» բառից հետո լրացնել «, որը վճարվում է այն մարմնից, որտեղ քաղաքացիական ծառայողի կատարողականը գնահատվել է դրական:» բառերով.

2) 4-րդ մասի առաջին պարբերությունում «, ինչպես նաև» բառերը փոխարինել «կամ» բառով, իսկ երկրորդ պարբերության «որակյալ կատարման» բառերը՝ «կամ աշխատանքի որակյալ կատարման» բառերով:

ՀՈԴՎԱԾ 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

ՀՀ Ազգային Ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկությունների

Առաջարկության հեղինակներ	**Հոդվածը**	**Առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**
ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ՝ Հ.Հակոբյան (024 ընտրատարածք) Խաչիկ Հարությունյան (128 ընտրատարածք) Ա.Մխիթարյան (077 ընտրատարածք) Վ.Մարկոսյան (014 ընտրատարածք) Ռ.Հովսեփյան (006 ընտրատարածք)	**Հոդված 5**	Նախագծի 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**ՀՈԴՎԱԾ 5.** Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հայաստանի Հանրապետության նախարարի, Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարի, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության նախագահի և Երևանի քաղաքապետի պաշտոնային դրույքաչափերը սահմանել 331595 դրամ: Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենի պաշտոնային դրույքաչափերը սահմանել 402810 դրամ:»	Առաջարկությունն ընդունվել է հիմնականում: Առաջարկված խմբագրությամբ նշված հոդվածում թվարկված ղեկավար աշխատողների ցանկից հանվել է Երևանի քաղաքապետը, որի վարձատրության հետ կապված հարցերը կարգավորված են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով:
ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ՝ Հ. Հակոբյան (024 ընտրատարածք) Խաչիկ Հարությունյան (128 ընտրատարածք) Ա.Մխիթարյան (077 ընտրատարածք) Վ.Մարկոսյան	**Հոդված 7**	Նախագծի 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**ՀՈԴՎԱԾ 7.** Օրենքի 11-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հայաստանի Հանրապետության նախարարի առաջին տեղակալի պաշտոնային դրույքաչափը սահմանել 247700 դրամ: Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի առաջին տեղակալի, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենի առաջին տեղակալի պաշտոնային դրույքաչափերը սահմանել 294700 դրամ:»	Առաջարկությունն ընդունվել է:

Առաջարկության հեղինակներ	Հոդվածը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
(014 ընտրատարածք) Ռ.Հովսեփյան (006 ընտրատարածք)			
ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ՝ Հ.Հակոբյան (024 ընտրատարածք) Խաչիկ Հարությունյան (128 ընտրատարածք) Ա.Մխիթարյան (077 ընտրատարածք) Վ.Մարկոսյան (014 ընտրատարածք) Ռ.Հովսեփյան (006 ընտրատարածք)	**Հոդված 8**	Նախագծի 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**ՀՈԴՎԱԾ 8.** Օրենքի 12-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հայաստանի Հանրապետության նախարարի տեղակալի, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության նախագահի տեղակալի, Հայաստանի Հանրապետության մարզպետի (Երևանի քաղաքապետի) տեղակալի, Վիճակագրության պետական խորհրդի անդամի, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմնի ղեկավարի, Հայաստանի Հանրապետության նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի ղեկավարի (բացառությամբ սույն հոդվածի 2-րդ նախադասությունում նշված ղեկավար աշխատողների) պաշտոնային դրույքաչափերը սահմանել 205757 դրամ: Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի, Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի տեղակալի, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալի, Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության պետի, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության տնօրենի պաշտոնային դրույքաչափերը սահմանել 240650 դրամ:»	Առաջարկությունն ընդունվել է հիմնականում: Առաջարկված խմբագրությամբ նշված հոդվածում թվարկված ղեկավար աշխատողների ցանկից հանվել է Երևանի քաղաքապետի տեղակալը, որի վարձատրության հետ կապված հարցերը կարգավորված են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով:
ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ՝ Հ.Հակոբյան	**Հոդված 9**	Նախագծի 9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**ՀՈԴՎԱԾ 9.** Օրենքի 13-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝	Առաջարկությունն ընդունվել է:

Առաջարկության հեղինակներ	Հոդվածը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
(024 ընտրատարածք) Խաչիկ Հարությունյան (128 ընտրատարածք) Ա.Մխիթարյան (077 ընտրատարածք) Վ.Մարկոսյան (014 ընտրատարածք) Ռ.Հովսեփյան (006 ընտրատարածք)		«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմնի ղեկավարի առաջին տեղակալի, Հայաստանի Հանրապետության նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի ղեկավարի առաջին տեղակալի (բացառությամբ սույն հոդվածի 2-րդ նախադասությունում նշված ղեկավար աշխատողների) պաշտոնային դրույքաչափը սահմանել 163810 դրամ: Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի առաջին տեղակալի պաշտոնային դրույքաչափը սահմանել 186595 դրամ:»	
ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ՝ Հ.Հակոբյան (024 ընտրատարածք) Խաչիկ Հարությունյան (128 ընտրատարածք) Ա.Մխիթարյան (077 ընտրատարածք) Վ.Մարկոսյան (014 ընտրատարածք) Ռ.Հովսեփյան (006 ընտրատարածք)	**Հոդված 10**	Նախագծի 10-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**ՀՈԴՎԱԾ 10.** Օրենքի 14-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմնի ղեկավարի տեղակալի, Հայաստանի Հանրապետության նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի ղեկավարի տեղակալի (բացառությամբ սույն հոդվածի 2-րդ նախադասությունում նշված ղեկավար աշխատողների) պաշտոնային դրույքաչափը սահմանել 142840 դրամ: Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալի, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության տնօրենի տեղակալի պաշտոնային դրույքաչափերը սահմանել 159570 դրամ:»	Առաջարկությունն ընդունվել է: